

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԱԶՆԻՎ ՀԱՅ ԲԱՂԱՔԱՑԻՆ
(Սեդա Գասպարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Երևանի պետական համալսարանի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Սեդա Քերոբի Գասպարյանի ծննդյան 75-ամյակը: Արգասաբեր է բազմավաստակ գիտնականի, մանկավարժի, գիտակրթական գործի հմուտ կազմակերպչի անցած ուղին:



Ծնվել է 1946 թ. հունիսի 30-ին Երևանում: Ծնողները Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, զաղթի տառապանքներով լի ճանապարհին հաղապատներին կորցնելով, հանգրվանել էին Թիֆլիսում: Ճակատագրի բերումով հանգիպել էին, ամուսնացել, ապա տեղափոխվել Երևան իրենց զավակներին հայկական միջավայրում և հայեցի դաստիարակելու նպատակով: Ընտանիքը բազմանդամ էր:

Զավակները բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացան և իրենց մասնագիտական ոլորտներում հասան հաջողությունների:

1963 թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի Նար-Դոսի անվան դպրոցը՝ Սեդա Գասպարյանն ընդունվեց ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի անգլերեն լեզվի ու գրականության բաժինը և ավարտեց 1968 թ.: Դեռևս 4-րդ կուրսի ուսանողուհի էր, որ ականավոր լեզվաբան Գևորգ Զահուկյանը, նրա մեջ տեսնելով ապագա գիտնականի սաղմերը, երաշխավորեց նրան աշխատանքի անցնելու ուսմանազերմանական բանասիրության ամբիոնում: Ընդգծված մասնագիտական կարողությունների ու հետեղական տքնաձան աշխատանքի շնորհիվ նա ամբիոնի լաբորանտից հասավ ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնին:

1982 թ. ավարտելով Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նպատակային ասպիրանտուրան՝ 1983 թ. նույն բուհում անվանի լեզվաբան Օլգա Ախմանովայի ղեկավարությամբ պաշտպանեց թեկնածուական թեզ «Полифония слова в составе фигуры сравнения» թեմայով: 1989 թ. նրան շնորհվեց դոցենտի գիտական կոչում և նույն տարին ընդունվեց դոկտորանտուրա ու կրկին գործուղվեց Մոսկվայի պետական համալսարանի դոկտորական ատենախոսությունն ավարտելու: 1994 թ. այստեղ հաջողությամբ պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը «Сравнение как «изъяснение» в научной речи и как средство лингвопоэтического творчества в художественной литературе» թեմայով, որը նոր ու արդիական մոտեցում

* Ներկայացվել է 29. V. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

էր ոճագիտության մի շարք հիմնարար խնդիրների բնագավառում և գրված էր գիտական բարձր չափանիշներով:

1993-ից Ս. Գասպարյանը ղեկավարում է ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնը, որն իրականացնում է բազմաբնույթ ուսումնամեթոդական, գիտամեթոդական, գիտակազմակերպական, գիտահրատարակչական գործունեություն: 2002 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 2014 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Բազմազան ու ընդգրկուն է նրա հետաքրքրությունների շրջանակը՝ լեզվի և ոճի հարցեր, լեզվապոետիկայի ոլորտ, գործառական ոճագիտություն, վերասույթային հնչյունաբանություն, տեքստի մեկնաբանություն, թարգմանության տեսություն, հայագիտական խնդիրներ և այլն: Անգլահայտելի է նրա կատարած աշխատանքը հանրապետությունում անգլերենի ուսումնասիրության ու բուհական ասպարեզում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ուղղորդման ու կազմակերպման գործում: Այսօր արդեն փաստ է, որ Ս. Գասպարյանի հիմնադրած անգլիագիտական հետազոտությունների լեզվաբանական դպրոցը պատշաճ համարում ունի ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս:

1995-ից մինչ այժմ նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել և գիտական շրջանառության մեջ է մտել 28 թեկնածուական ու 6 դոկտորական ատենախոսություն:

Ս. Գասպարյանը հեղինակ է շուրջ 170 գիտական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աշխատությունների. մենագրություններ, ՀՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ լույս տեսած բուհական դասագրքեր ու ձեռնարկներ, գիտական հոդվածներ՝ հրատարակված ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի առաջատար գիտական հանդեսներում: Արժեքավոր է Ս. Գասպարյանի գիտական գործունեությունը թե՛ անգլիական բանասիրության ոլորտում և թե՛ նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակում: Նրա մասնագիտական նվիրումն այնպիսի բարդ բնագավառի, ինչպիսին է գեղարվեստական խոսքը, նաև ամենատարբեր թեմաներով նրա հետազոտությունները իմաստաբանության, պրագմատիկայի, պոետիկայի ու ոճագիտության բնագավառներում, պահանջում են պրոֆեսիոնալ զննականություն և գիտական հասունություն:

Առանձնապես կարևոր են նրա գիտական ձեռքբերումները գրական ստեղծագործության մեկնաբանության դաշտում (տե՛ս “The Knowledge of Literature”, Ed. Angela Locatelli, Bergamo University Press, 2006, pp. 67–72): Բանասիրության՝ այս մշտնջենական ու բարդ խնդրի լուծումը պրոֆ. Ս. Գասպարյանն առաջարկում է փնտրել բանասիրական հերմենևտիկայի ոլորտում: Հիմք ընդունելով Շրայերմախերի հերմենևտիկական շրջանի տեսությունը՝ նա առաջարկում է գրական ստեղծագործության բազմամակարդակ, քայլ առ քայլ ընթացող վերլուծություն (տե՛ս «Տեքստ, փոխաբերականություն, մեկնաբանություն», Երևան, 2018, համահեղինակ՝ Ա. Մաթևոսյան): Բանասիրի նրա խորաթափանցությունը «համեմատություն» ոճական հնարի ուսումնասիրության մեջ հնարավորություն է տվել կարևորելու համեմատության և փոխաբերության նուրբ փոխառնչությունները, ապա

ընդլայնելու ուսումնասիրությունը՝ ներառելով նաև փոխանունությունն ու չափազանցությունը և տարբերակելու համեմատության երկու տեսակ՝ փոխաբերական ու փոխանվանական համեմատություններ: Այս տարբերակումն օգնում է լավագույնս ըմբռնել անգլերենի երկու հիմնական գործառական ոճերի (գեղարվեստական և գիտական) տարբերությունները (տե՛ս «Фигура сравнения в функциональном освещении». Ереван, 2000, 2013, «Գործառական ոճադիտություն», Երևան, 2011, համահեղինակներ՝ Գ. Մուրադյան, Ն. Գասպարյան):

Ս. Գասպարյանի գիտական հետազոտության անհերքելի արժանիքներից կարելի է համարել գրական տեքստի լեզվաբանաստեղծական մեկնաբանության օգնությամբ լեզվի և մտածողության հարցերի քննության մեջ դասական, ավանդական և ճանաչողական մոտեցումները համադրելու մեթոդաբանությունը: Գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրության գործում հերմենևտիկական մոտեցման կարևորումը գիտնականին բերում է այն համոզման, որ լեզվաոճական և լեզվաբանաստեղծական մեթոդների համադրի կիրառությունը հուսալի միջոց է գեղագիտական հատկանիշներով օժտված յուրաքանչյուր տեքստ ուսումնասիրելիս: Նրա դիտարկումներից շատերը վկայում են համեմատության՝ նրա իսկ մշակած տեսության հիմնավորվածությունը ոչ միայն անգլերենի, այլև հայերենի ու ռուսերենի առնչությամբ (տե՛ս «Лингвопоэтика образного сравнения». Ереван, 1991, 2008): Պրոֆ. Գասպարյանի մոտեցումն արժևորվում է նաև նրանով՝ գեղարվեստական ստեղծագործությունը դիտարկում է որպես անհատական և, որ ավելի կարևոր է, հասարակական գիտակցության դրսևորում: Նա հետևողականորեն շեշտադրում է համեմատության դերը ոչ միայն բանաստեղծական պատկերների ստեղծմանը նպաստելու, այլև «հեղինակի ձայնը» լսելի դարձնելու հարցում, և գեղարվեստական համեմատությունը, որը վաղնջական ժամանակներից մեզ հասած ոճական հնար է, դիտարկվում է որպես ճանաչողության ու հույզերի արտահայտման հիմնական ձևերից մեկը: Գիտնականի «համեմատություն» ոճական հնարի տեսության ձեռքբերումներից է նաև առողջաբանական մեթոդի կիրառությունը, որը հնարավորություն է տալիս վեր հանելու փոխանվանական և փոխաբերական համեմատությունների էական տարբերությունը նաև հնչերանգային ու առողջաբանական յուրահատկությունների օգնությամբ: Սա միանգամայն նոր մոտեցում է և արժանացել է մասնագիտական գնահատականի (տե՛ս И. М. Магидова, С. К. Гаспарян. Фигура сравнения в функциональном освещении. Ереван, 2000, с. 324.— «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, էջ 200–203):

Հետաքրքիր ու օրիգինալ լուծումների են հանգում նաև պրոֆ. Գասպարյանի դիտարկումները գեղարվեստական թարգմանության հարցում, որը նրա համոզմամբ՝ բարդ փոխաբերականացման ու փոխակազմարման գործընթաց է՝ միտված բացահայտելու երկի ոչ միայն ներլեզվական այլև արտալեզվական կապերը: Ելնելով գործառական մոտեցման կարևորությունից՝ նա հիմնավորում է, որ ապահովել ոճապատկերային համարժեքություն և վերակերտել ստեղծագործության լեզվական, գեղագիտական ու գաղափարական ամբողջությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ

Թարգմանիչն առաջնորդվում է, ըստ պրոֆեսորի առաջադրած մետալեզ-վական բնորոշման՝ «փոխաբերական տեղաշարժի» սկզբունքով:

Կրակովի Յագիելոնյան համալսարանի պրոֆ. Էլժբիետա Կրժանովսկա-Կլուչևսկայայի կարծիքով՝ Ս. Գասպարյանն անգլերենի ուսումնասիրութ-յան և հատկապես գեղարվեստական տեքստի իմաստաբանության ու պոե-տիկայի բնագավառում միջազգային ճանաչում վայելող գիտնական է, ըստ էության, Հայաստանի դեսպանը, որն ապահովում է իր երկրի ներդրումը մի քանի լեզուների և մշակույթների սահմանները հատող բանասիրական ու-սումնասիրությունների բնագավառում:

Առանձնակի ուշադրության է արժանի Ս. Գասպարյանի “The Armenian Genocide: A Linguocognitive Perspective” (Երևան, 2014) մենագրությունը (ա-ռաջաբանը՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի), որտեղ հեղինակը կանխորոշել է տեքստաբանական մոտեցման արդյունավետությունը Հայոց ցեղասպա-նությանն առնչվող խնդիրների ուսումնասիրության բնագավառում, առաջ քաշել ժխտողականների խոսքային ռազմավարություններն ու անհերքելի հերքերու քողարկված միտումները լեզվական փաստերի քննությամբ վեր հանելու և ճանաչելու մեթոդաբանորեն հուսալի դրույթը: Համահունչ լինե-լով ժամանակի պահանջներին՝ ուսումնասիրությունը եզակի է իր տեսակի մեջ, ըստ էության՝ նորություն ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ գրքերի շարքում: Այն սոսկ լեզվաբանական աշխատանք չէ՝ նոր մեթոդների ու հմտությունների կիրառմամբ: Հեղինակն այստեղ և՛ համեմատաբան է, և՛ ազգագրագետ, և՛ հոգեբեզվաբան, և՛ աղբյուրագետ: Այս աշխատանքը միանգամայն նոր խոսք է ցեղասպանագիտական ուսումնասիրությունների ու առավել լայն առումով հակահայկական քարոզչության մտացածին և չհիմնավորված մեխանիզմները բացահայտելու ոլորտում: Քննության ելա-կետը լեզուն է: Լեզվի հուսալիության դրույթը ոչ միայն առանցքային է ուսումնասիրության համար ընդհանրապես, այլև ակնհայտորեն իր ուրույն դրսևորումն է գտնում գրքի բոլոր յոթ գլուխներում: Քննությունն ուղղված է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում տարա-բնույթ պատմաքաղաքական փաստերի, տարբեր մեկնաբանությունների ու արժեկոթմանների լեզվական արտահայտության վերհանմանը: Այլ կերպ՝ հեղինակը փորձում է Հայոց ցեղասպանության՝ ինչպես ընդունող ու դատապարտող, այնպես էլ չընդունող ու ժխտող մեկնաբանություններում տեղ գտած լեզվական փաստերը քննելով՝ բացահայտել ցեղասպանական իրողությունների տարաբնույթ արժեկոթմանների բուն էությունը, պատմական փաստերի միտումնավոր աղավաղումները՝ դրանով իսկ ուսումնասիրութ-յանը տալով նոր որակ, միաժամանակ հաստատելով լեզվաբանության՝ վեր-ջին տասնամյակներում գիտական չրջանառության մեջ մտած նոր ուղղութ-յուններից մեկի՝ ճանաչողական լեզվաբանության կենսունակությունն ու սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը: Ճանաչողական լեզվաբա-նության համադրումը մեթոդաբանական այլ մոտեցումների հետ ենթադրում է տեքստի խորքային ընթերցում, որի համար անհրաժեշտ է բազմակողմանի ու խորքային գիտելիք: Դա ակնհայտորեն տեսանելի է պրոֆ. Գասպարյանի մենագրության յուրաքանչյուր էջում, ու նաև սրանով է պայմանավորված այս աշխատանքի հաջողությունը: Շատ կարևոր է, որ աշխատությունը գր-

ված է անգլերեն, և սա վկայությունն է գիտնականի այն համոզմունքի՝ օտար լեզուների իմացությունը պարտավոր ենք նախ անվերապահորեն ծառայեցնել ազգային խնդիրների լուսաբանմանը և դրանք հասանելի դարձնենք միջազգային հանրությանը: Այո՛, իրավացի է հեղինակը, այսպիսի ուսումնասիրություններով է, որ կարելի է հակազդել Հայոց ցեղասպանության անհերքելի իրողությունը ժխտող ու, ընդհանրապես, մեր պատմությունն աղավաղող հետազոտողների կեղծ մեկնաբանություններին և չեչտադրել հակահայկական քարոզչության դեմ մեր պայքարի արդարացիությունն ու հիմնավորվածությունը: Այդ են վկայում այս ուսումնասիրության առնչությամբ արտերկրի գիտնականներից ստացված արձագանքները (տե՛ս I. M. Magidov a. “Preface to The Armenian Genocide: A Linguocognitive Perspective by S. Gasparyan”. Yerevan, YSU, 2014, pp. 15–20; A. Locatelli. Seda Gasparyan. “The Armenian Genocide: A Linguocognitive Perspective”. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, № 3, էջ 350–353):

Ս. Գասպարյանը հաջողությամբ դեկավարել է բազմաթիվ գիտական թեմաներ, իսկ 2015-ից ի վեր «Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտություններ» գիտահետազոտական լաբորատորիայի գիտական ղեկավարն է: Այս բազային թեմայի շրջանակներում մշակվել են հարցին առնչվող տարբեր խնդիրներ, վեր են հանվել լեզվական և արտալեզվական այն գործոնները, որոնց օգնությամբ հակահայկական քարոզչություն իրականացնող հեղինակներին հաջողվում է տեքստ ներմուծել այս կամ այն ներակա արժեքումը և իրագործել իրենց հակահայկական հաղորդակցական արատավոր նպատակները:

“Raphael Lemkin’s Draft Convention on Genocide and the 1948 UN Convention” (Երևան, 2016, համահեղինակներ՝ Շ. Պարոնյան, Ա. Չուբարյան, Գ. Մուրադյան) հետազոտությունը, որն իրականացվել է լեզվաոճական, լեզվագործաբանական ու ճանաչողական մոտեցումների փոխներթափանցմամբ, նույնպես կարևոր ներդրում է ցեղասպանագիտության ոլորտում և կարող է խթան դառնալ ցեղասպանագիտական խնդիրները միջգիտակարգային մոտեցմամբ քննելու առումով: Այս ուսումնասիրությունը մանրազնին, լուրջ ու տքնաջան գիտական աշխատանքի արդյունք է՝ նվիրված ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի և այդ իրավական փաստաթղթի լեմկինյան նախագծի համեմատական դիսկուրսային քննությանը: Այն եզակի է նախ այն առումով, որ, այս երկու փաստաթղթերի առանձին, ինչպես նաև համեմատական քննության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն դրանք արվել են իրավաբանական հարթության վրա՝ նշելով միայն դրանցում առկա բացթողումները, իրավաբանական թերացումներն ու անհամապատասխանությունները: Սույն հետազոտությունը շահեկանորեն առանձնանում է մյուսներից նրանով, որ ընդգրկում է լեզվաբանական լայն մտահորիզոն: Անդրադարձ է արվում իրավագիտական անգլերենի ընդհանուր բնութագրին, վեր են հանվում ուսումնասիրվող փաստաթղթերի լեզվական հյուսվածքին բնորոշ ոճական, գործաբանական, իմաստաբանական, քերականական առանձնահատկությունները: Գործաբանա-

կան լեզվաբանության ընդհանուր հենքով կատարված այս հետազոտությունում լուսաբանվում է կարևորագույն իրավական փաստաթուղթը կազմող հմուտ իրավաբանների, այսպես կոչված, «հետին միտքը» (լեզվաբանության մետալեզվում՝ կանխենթադրություն), բացահայտվում է միջազգային իրավունքի փաստաթղթի այս կամ այն դրույթի ազդեցությունն ու ծեղացնելու կամ թուլացնելու, որևէ դրույթին միանշանակություն, հստակություն կամ հակառակը՝ երկիմաստություն հաղորդելու խոսքային մարտավարությունը: Համեմատական քննությունը ցույց է տալիս, թե ինչպես է կոնվենցիայի դիսկուրսում թուլանում ասույթի հաղորդակցական ներուժը, երբ ՄԱԿ-ի կոնվենցիայի հեղինակները խմբագրում են Լեմկինի նախագիծը, վերաձևակերպում որոշ դրույթներ, կրճատում մի շարք կարևոր գաղափարներ (օրինակ՝ մշակութային ցեղասպանության գաղափարը), փոփոխում տեքստի տոնայնությունը՝ շեշտադրելով մարդկության դեմ իրականացվող ոճիրները դատապարտելու իրենց դիրքորոշումը: Հետազոտությունը բացահայտում է, որ շարադրանքի բառային, ձևաբանական, շարահյուսական փոփոխությունները նվազեցրել են ցեղասպանության հանդեպ անհանդուրժողականության ոգին և ոճիրն իրականացնողներին խստագույնս պատժելու վճռականությունը: Այս աշխատանքի հետազոտական արդյունքները նույնպես բարձր գնահատականի են արժանացել մասնագիտական շրջանակներում (տե՛ս Frieze Donna-Lee, Review to “Raphael Lemkin’s Draft Convention on Genocide and the 1948 UN Convention”. Yerevan, YSU, 2016, pp. 15–20; G. Gasparyan. “A Valuable Research”. – Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. Yerevan, 1–2, pp. 147–153; Salkiewicz-Munnerlyn E., Review to S. Gasparyan, Sh. Paronyan, A. Chubaryan, G. Muradyan, “Raphael Lemkin’s Draft Convention on Genocide and the 1948 UN Convention”. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 2018, № 1, էջ 325–327):

Հետազոտական պրոպոզիցիաները լեզվաբանության և իրավագիտության փոխհատման դաշտում գիտնականին բերեցին թուրքիայի քրեական օրենսգրքի տիրապետող 301 հոդվածի քննության ոլորտ, և այս անգամ էլ միջգիտակարգային հենքով իրականացված տեքստային վերլուծության ու մեկնաբանության միջոցով հաջողվեց բացահայտել լեզվական մտաշահարկման ռազմավարությունը այդ իրավական փաստաթղթում, որը, ըստ էության, լուրջ սպառնալիք է մարդու խոսքի ազատության հիմնարար իրավունքին (տե՛ս “The Use and Abuse of Language in the Legal Domain”. Montreal, Arod Books, 2019, համահեղինակներ՝ Շ. Պարոնյան, Գ. Մուրադյան): Դիտարկումները ցույց են տալիս, որ երբ քաղաքականությունը գերիշխում է օրենքին, իրավական փաստաթղթերում տեղ են գտնում լեզվական մտաշահարկման դեպքեր, որոնք միտված են սպասարկելու իշխանությունների շահերը և բավարարելու նրանց քաղաքական մտադրությունները: Այս ուսումնասիրությունը թե՛ տեսական և թե՛ գործնական հետաքրքրություն է ներկայացնում միջազգային առումով, քանզի միանգամայն հիմնավոր վեր է հանում նշված փաստաթղթի հակասականությունն արդի աշխարհի ժողովրդավարական արժեքներին:

Պրոֆ. Ս. Գասպարյանի կենսագործունեության ոլորտը լայն է և ընդգրկուն: Հրաշալի հետազոտող լինելուց զատ՝ նա նաև բազմալսատակ մանկավարժ է և հմուտ գիտակազմակերպիչ՝ բազմաթիվ մասնագիտական ու հասարակական նախաձեռնությունների հեղինակ: Հանրապետական ու միջազգային գիտաժողովներ, գիտական սեմինարներ, մասնագիտական որակի բարձրացման դասընթացներ, կրթական-քննարկումներ, որոնք ոչ միայն կարևոր ներդրում են ունեցել լեզվի, գրականության ու մշակույթի ուսումնասիրության բնագավառում, այլև խթանել են տեղի և արտերկրի գիտնականների համագործակցությունը: Պատահական չէ, որ եվրոպացի գործընկերների հետ համագործակցության համատեքստում ծնվեցին երկու կոլեկտիվ մենագրություններ (*“European English Studies: Contributions towards the History of a Discipline”*/ Ed. by Renate Haas and Balz Engler, Leicester University Press, 2008; *“Rewriting Academia: The Development of the Anglicist Women’s and Gender Studies of Continental Europe”*/ Ed. by Renate Haas, Frankfurt am Main, Peter Lang GmbH, 2015), որոնցում եվրոպական տարբեր երկրների կողքին տեղ գտան նաև հայկական կրթական իրականության մեջ անգլերենի՝ որպես միջազգային հաղորդակցության լեզվի ներդրմանը, զարգացման ընթացքին և հետազոտմանն առնչվող տարբեր հարցեր:

Ս. Գասպարյանի ներկայացրած գեկուցումներն ու դասախոսություններն աշխարհի տարբեր երկրների (Անգլիա, Իսպանիա, Իտալիա, Արգենտինա, Հունաստան, Սլովակիա, Ռուսաստան և այլն) համալսարաններում ու գիտական կենտրոններում միշտ էլ գիտական հետաքրքրություն են խթանել և արժանացել բարձր գնահատանքի: Պատահական չէ, հետևաբար, որ մեծ հարգանք վայելող գիտնականն իր մասնագիտական բազմակողմանի կարողություններն ու հմտությունները սիրով ու պատրաստակամությամբ ներդնում է՝ ի բարօրություն մեր գիտության ու կրթության բնագավառի զարգացման գործին: 1995–2019 թթ. եղել է ԵՊՀ-ում գործող «Գերմանական լեզուներ» մասնագիտության 009 մասնագիտական աստիճանաշնորհող խորհրդի նախագահ, 2000–2019 թթ.՝ ՀՀ ԿԳ նախարարության մեթոդ միավորման անգլերենի առարկայական հանձնաժողովի նախագահ: ԵՊՀ գիտական խորհրդի անդամ է: 2003-ից Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ընկերության վարչության անդամ է և եվրոպական դաշնության չրջանակներում գործող Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի հիմնադիր նախագահ: 2005-ից հիմնադիր և գլխավոր խմբագիրն է *“Armenian Folia Anglistika”* անգլերեն հրատարակվող գրախոսվող միջազգային հանդեսի (<https://journals.ysu.am/index.php/arm-fol-angl>), որի շրջանակներում 2007-ից բացված հայագիտական ուսումնասիրությունների բաժինը հնարավորություն է ընձեռում օտարալեզու ընթերցողին անգլերեն ներկայացնելու նաև հայագիտության ոլորտի տարբեր արդիական խնդիրներ: 2009–2018 թթ. եղել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում գործող «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» ամենամյա հանդեսի հիմնադիր և գլխավոր խմբագիրը: 2006–2019 թթ. համագործակցել է անգլիագիտական հետազոտությունների *“European Journal of English Studies”* (Routledge: Taylor & Francis Group) հանդեսի խմբագրական խորհրդի հետ՝ ստանձնելով խորհր-

դատվական հանձնախմբի անդամի պարտականությունը: Ներկայում էլ համագործակցում է տարբեր գիտական հանդեսների հետ [«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», “Science and Education: A New Dimension” (<https://www.Seanewdim.com/impressum.html>), “Cognition, Communication, Discourse” (Kharkov) (<https://periodicals.karazin.ua/cognition/discourse/about/editorialTeam>); «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» (Երևան, ԵՊՀ), «Բանբեր Հայագիտության» (Երևան), «Հայագիտության հարցեր» (Երևան, ԵՊՀ) (<http://www.armin.am/images/menus/3204/Handes-2021-1-22-1.pdf>), “Professional Discourse and Communication”, Moscow State Institute of International Relations (<https://www.pdc-journal.com/jour/pages/view/Gasparyan>)]:

Գիտության, կրթության բնագավառներում ներդրած նշանակալի ավանդի, նաև գիտական միջազգային կապերի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար Ս. Գասպարյանն արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2013 թ.), ՀՀ վարչապետի հուշամեդալի (2009 թ.), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակի (2009 թ.): Բազմիցս հաղթող է ճանաչվել ՀՀ գիտության պետական կոմիտեի հայտարարած «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթներում, պարգևատրվել է ԵՊՀ արծաթե և ոսկե հուշամեդալներով (1999 թ., 2006 թ.), ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրերով (2004 թ., 2006 թ., 2008 թ.) և ԿԳՄՍ ոսկե մեդալով (2021 թ.):

Օրինակելի են նաև Ս. Գասպարյանի մարդկային որակները: Նրա աշխատանքային երկար ու ձիգ տարիների ընթացքում բոլորն են հասկացել, որ գործ ունեն ազնիվ, արդարամիտ և սկզբունքային մարդու հետ, որն ամենայն պատասխանատվությամբ ու բժախտողությամբ է վերաբերվում ձեռնարկած ցանկացած գործի, խստապահանջ է նախ իր, ապա դիմացինի նկատմամբ, և դա երբեք չի խանգարում նրան հոգատար վերաբերվել շրջապատին:

Շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ՝ Սեդա Գասպարյանին մաղթենք քաջառողջություն, երիտասարդական ավյունով տոգորված բեղմնավոր գործունեություն և նորանոր գիտակրթական մտահղացումներ:

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ